ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ և ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

«Ատելության խոսքն ու իրավապաշտպան գործունեության մարտահրավերները արդի Հայաստանում, մշակույթ, ինստիտուտներ, կարգավորում

«Chatham house» ձևաչափով փորձագիտական հանդիպման Արդյունքների վերլուծություն

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում իրականացվող «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիայի կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն ծրագիրն իրականացնող կոնսորցիումը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Երևան, 2019

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում առանց հղումների իրավունքի կլոր սեղան քննարկման վերլուծություն

Սույն թվականի ապրիլի 3-ին, Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում ֆինանսավորված «Մարդու իրավունքներ. մշտադիտարկում և հրապարակայնություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում ստեղծված Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիայի կողմից կազմակերպվել է քննարկում՝ «Ատելության խոսքն ու իրավապաշտպան գործունեության մարտահրավերները արդի Հայաստանում, մշակույթ, ինստիտուտներ, կարգավորում» թեմայով: Քննարկմանը մասնակցում էին թվով 15 քաղաքացիական հասարակության և պետական մարմինների ներկայացուցիչներ:

Չնայած 2018թ. ապրիլին Հայաստանում գրանցված շրջադարձային փոփոխություններին՝ իրավապաշտպանների իրավունքների ապահովման խնդիրը շարունակում է արդիական մնալ թե օրենսդրական և թե իրավապահ գործունեության իրականացման մակարդակում:

«Իրավունքի Ուժ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, կարևորելով օրենսդրական դաշտում փոփոխությունների անհրաժեշտությունը, նշեց, որ օրենսդրական բացերի և իրավապահ մարմինների ենթադրյալ անգործության պատճառով իրավապաշտպանների իրավունքների խախտումների վերաբերյալ դիմումները երբեմն մերժվել են՝ նպաստելով անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը և նպանատիպ իրավախախտումների շարունակականությանը:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն Արմեն Գալստյանը նշել է, որ թեման հետաքրքիր է և հանդուրժողականության պակասը Հայաստանում նոր չի, որ ծնունդ է առել:

Քննարկումն անցնում էր «առանց հղումների իրավունքի» ձևաչափի համաձայն, որպեսզի ներկաներն առավել անկաշկանդ ներկայցնեին իրենց դիրքորոշումը՝ տարբեր հարցերի վերաբերյալ:

Քննարկման մասնակիցները ներկայացրին իրենց մտահոգությունները վերը նշված թեմայի շուրջ: Հանդիպմանը ներկա փաստաբան Հայկ Ալումյանը ներկայացրեց Իրավապաշտպան գործունեությանն ատելության խոսքի նետած մարտահրավերները, իսկ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական Նինա Փիրումյանը՝ Մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերների հաղթահարմանն ուղղված առկա գործիքակազմը, սահմանափակումները և զարգացման հնարավորությունները:

Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում վեր են հանվել իրավապաշտպանների իրավունքների ապահովման ոլորտի մի շարք խնդիրներ և բացասական օրինաչափություններ: Հիմնական խնդիրներից է իրավապաշտպան գործունեության տարբեր ասպեկտներին հասարակության որոշ խմբերի հակազդեցությունը, որը դրսևորվում է տարատեսակ իրավախախտումների, ագրեսիվ գործողությունների միջոցով և միտված է իրավապաշտպաններին վարկաբեկելուն, զրպարտելուն և պիտակավորելուն, և այդ հակազդեցության տարատեսակ արտահայտումներին իրավական բնութագիր տալու

անհնարինությունը՝ պայմանավորված օրենսդրական բացերով և իրավապահ մարմինների ենթադրյալ անգործությամբ: Ինչպես նաև առկա խնդիրներից է իրավապաշտպան գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկվածության ցածր մակարդակը, տարատեսակ լրատվամիջոցների և տեղեկատվական այլ հարթակների միջոցով մանիպուլյատիվ տեղեկատվության տարածումը և իրավապաշտպանների իրավունքներն ամրագրող և պաշտպանության մեխանիզմներ սահմանող օրենսդրական ակտի բացակայությունը:

Բացահայտված խնդիրների շուրջ ծավալված քննարկումների արդյունքում վեր հանվեցին մի շարք կարևոր առաջարկներ.

- Ընդունել օրենսդրական ակտ, որը կկարգավորի իրավապաշտպանների գործունեությունը և կապահովի նրանց իրավունքները, այդ իրավունքների խախտումների կանխման և վերականգման մեխանիզմներ կստեղծի:
- Իրավապահ մարմինների աշխատակազմերում ստեղծել արագ արձագանքման խմբեր՝ բացառապես իրավապաշտպանների գործերով:
- ՄԻՊ-ի գրասենյակում նախատեսել համապատասխան հաստիք՝ իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությամբ ի պաշտոնե զբաղվող:
- Քայլեր ձեռնարկել հասարակության շրջանում իրավապաշտպանների գործունեության մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:
- Օրենսդրական հավելյալ մեխանիզմներ մշակել իրավապաշտպաններին վիրավորանքներից և զրպարտությունից պաշտպանելու նպատակով:

  Փաստաբանների հասցեին իրենց մասնագիտական գործունեության արդյունքում հնչած վիրավորանքներից և զրպարտությունից պաշտանության միջոցներ մշակելու օրինակով նաև համապատասխան միջոցներ նախատեսել լրագրողների և իրավապաշտպանների իրավունքների ապահովման համար:
- Օրենսդրական նախաձեռնությունների միջոցով սոցիալական մեդիան բերել իրավական դաշտ:
- Հասարակության շրջանում պետք է սերմանել պատասխանատվությունից անխուսափելիության գիտակցում և պետք է քրեականացնել որոշ խմբերի անձանց նկատմամաբ վիրավորանքը: Այս խնդիրների լուծման ուղղությամբ կարևորվեց հասարակության և մեդիա դաշտում իրազեկվածության բարձրացումը:

Առանձին կարևորություն տրվեց ատելության խոսքի և դրա դեմ պայքարի մեխանիզմների զարգացմանը, ատելության խոսքի նկատմամբ քրեաիրավական արձագանքի խստացման կարիք կա: Այս հարցում ևս շատ կարևոր է հասարակության շրջանում իրավագիտակցության բարձրացումը և կրթությունը, որի համար պատասխանատու է հատկապես կրթության գիտության նախարարությունը:

Այսպիսով, հանդիպումը անցավ շատ արդյունավետ և բովանդակալից, ձեռք բերվեց պայմանավորվածություն շարունակել նմանատիպ հանդիպում-քննարկումմների շարքը և հետևողական լինել վեր հանված խնդիրների լուծմանը։